

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/2

25 հունիսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լաուրա Հոխոյանի 11.06.2013 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 14.05.2013 թ-ի թիվ 2117306 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի 03.04.2013 թ-ի թիվ 2117306 հանձնարարագրի Ա/Ձ Լաուրա Հոխոյանի մոտ իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 14.05.2013 թ-ի թիվ 2117306 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 297.447 դրամ:

Ա/Ձ Լաուրա Հոխոյանի գանգատում մասնավորապես նշված է.

Հրազդանի ՏՀՏ պետի 03.04.2013 թ-ի թիվ 2117306 հանձնարարագրի համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ աշխատակիցների կողմից 18.04.2013 թ-ից մինչև 03.05.2013 թ-ը ընկած ժամանակահատվածում Ա/Ձ Լաուրա Հոխոյանի մոտ կատարվել են ստուգումներ: Ստուգման ավարտից հետո 03.05.2013 թ-ի թվագրմամբ ստուգման ակտի նախագիծը ուղարկվել է Ա/Ձ Լաուրա Հոխոյանին, որը վերջինս ստացել է 07.05.2013 թ-ին (հավաստում է փոստային առաքման ծրարի վրա առկա ամսաթվի նշումը): Այնուհետև, Հրազդանի ՏՀՏ-ն օրենսդրության խախտմամբ՝ չսպասելով առարկությունների համար սահմանված 5 աշխատանքային օր ժամկետի լրանալուն, 14.05.2013 թ-ին կազմում է ստուգման ակտը և ուղարկում տնտեսավարող սուբյեկտին, որը վերջինս ստանում է 15.05.2013 թ-ին:

Համաձայն ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով:

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը:

Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:

Վերը նշված իրավանորմերի համադրության արդյունքում պարզ է դառնում, որ Ա/Ձ Լաուրա Հոխոյանի նկատմամբ դրսևորվել է անօրինականություն, քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ-ի անիրավաչափ գործողությունների արդյունքում վերջինս գրկվել է ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված 5 աշխատանքային օր ժամկետում (նշված ժամկետը լրանում էր 2013 թ-ի մայիսի 17-ին) ակտի նախագծին ծանոթանալու և առարկություններ ներկայացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի և <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի դրույթներով, Ա/Ձ Լաուրա Հոխոյանը

խնդրում է չեղյալ համարել (վերացնել) ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ թիվ 2117306 ստուգման ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Լաուրա Հոխոյանի ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց ներկայացրած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

<<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Ակտի նախագիծը ստուգում իրականացնող անձը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին՝ առարկություններ ներկայացնելու նպատակով: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ակտի նախագիծը: Սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի կողմից առարկություններ չներկայացվելու դեպքում ստուգող մարմինը կազմում է ակտը և դրա մեկ օրինակը՝ ստորագրված ստուգում իրականացնող պաշտոնատար անձի կողմից, ժամկետի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին>:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման ակտի նախագիծը կազմվել է 03.05.2013 թ-ին և փոստային առաքմամբ ուղարկվել է Ա/Ձ Լաուրա Հոխոյանին: Ստուգման ակտի նախագիծը վերջինիս կողմից ստացվել է 07.05.2013 թ-ին: Տվյալ դեպքում, հաշվի առնելով <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից 5 աշխատանքային օրվա ընթացքում ակտի նախագիծը ուսումնասիրելու ժամկետը, ստուգման ակտը պետք է կազմվեր ոչ թե 14.05.2013 թ-ին, այլ՝ 17.05.2013 թ-ին:

Այսինքն, քննարկվող դեպքում խախտվել է <<<-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որի հետևանքով տնտեսավարող սուբյեկտը զրկվել է ստուգման ակտի նախագիծն ուսումնասիրելու և դրա վերաբերյալ առարկություններ ներկայացնելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորությունից:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 14.05.2013 թ-ի թիվ 2117306 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵԴՅԱՆ